բնակցի գերեզմանի վրա դնելու համար։ Այդ խորհրդին պատշաճաւոր հանդէսով նրանք բազմութեամբ տանում են քարը, բայց գերեզմանատան դռները նրանց առջև չեն բաց անում, ասելով թէ կապալառուից հրաման չը կայ։ Մինչև կապալառուին գտնում են, ժամեր են անցնում, յետոյ մի ահագին զալմաղալ է լինում հրաման ստանալու համար։ Ինչպէս երևում է, շուտով մեր եկեղեցական բոլոր պարագութիւնները կապալով կը տրվին։

—

«Մշակի» ներկայ համարի հետ տարածում ենք մեր բաժանորդներին ՄՈՍԿՎԱՅԻ Ա. Լ. Շտումմերի յայտարարութիւնը չոկոլադի մասին։

—

Մեզ գրում են Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ, որ իշխան Աբամելիք-Լազարեան մտադիր է Մոսկվայի և Ս. Պետերբուրգի հայոց եկեղեցիները իրանց կալուածներով յանձնել յիշեալ մայրաքաղաքների տեղական հայ հասարակութիւնների հոգաբարձութեանը։ Թղթակիցը խոստանում է այդ մասին աւելի մանրամասն կերպով գրել։

—

Մեղրի գիւղից մեզ գրում են, որ այնտեղի հայ ժողովուրդը շատ դժգոհ է իր երկու քահանաներից, որոնք միմեանց մէջ շատ անվայել կերպով են վարվում, միշտ թշնամաբար են վերաբերվում միմեանց դէմ, կռւում, միմեանց հայհոյում ամենաանվայել խօսքերով և այլն։

—

Մոռացանք յիշել մեր երէկվայ համարում, որ Թիֆլիսի հայ-կաթոլիկ եկեղեցու մէջ նոյեմբերի 21-ին կատարված հանդիսաւոր պատարագի ժամանակ, երբ պատարագիչը ինքն սրբազան Ջաքարեան Արդուինի հայ-կաթոլիկ եպիսկոպոսն էր, ներկայ էր և մեր սրբազան Գրիգոր եպիսկոպոս Աղափիրեան, որին հայ-կաթոլիկ եպիսկոպոսը մի օր առաջ այցելութիւն էր արել։

—

Նոյեմբերի 20-ին և 24-ին հայոց թատրոնական միւսական խումբը ներկայացրեց Շէկսպիրի «Համլէտ» ողբերգութիւնը։ Այդ ներկայացումների մասին կը խօսենք հետևեալ համարում։

—

Վերջին ժամանակները ՄՈՍԿՎԱՅՈՒՄ մտել է հրապարակական դասախօսութիւնների մի նոր և օգտաւէտ ձև, այն է կրօնական բովանդակութեան դասախօսութիւններ եկեղեցիներում։ Անդադար տեսնում ենք մայրաքաղաքի լրագիրներում այդ տեսակ յայտարարութիւններ. «Այս ինչ օր, այս ինչ ժամ, այս ինչ եկեղեցում հրապարակական դասախօսութիւն քրիստոնէութեան պատմութեան մասին, կատեխիզիսից, այս ինչ քահանան»։ Այսպիսով եկեղեցին ստանում է կատարեալ կրթական նշանակութիւն։

—

Ամբողջ ռուս մամուլը զբաղված է մի անցքով, որ պատահել է Ս. Պետերբուրգի գիտութիւնների ակադէմիայի մէջ։ Երևելի ռուս քիմիկոս Մէնդելէեվ չընդունվեցաւ ակադէմիայի անդամ, որովհետև ակադէմիան լցված է գերմանացիներով, որոնք թշնամաբար են վերաբերվում դէպի բոլոր ռուս գիտնականները։

—

Ակսակովի «Русь» լրագիրը շարունակում է արտասանքներ թափել ռուս ազգի վրա և յայտնում է, որ Ռուսաստանի ամենաանհրաժեշտ բարոյական պահանջը այն է, որ ռուս հասարակութիւնը ազատվի եւրոպական քաղաքակրթութեան և եւրոպական աշխարհայեացողութեան տարրութիւնից։ «Русскiй Курьеръ» լրագիրը նրան պատասխանում է, որ ռուս ժողովրդին հարկաւոր է ապահովութիւն գեղծումների դէմ, հարկաւոր է հաց և տնտեսական բարօրութիւն, իսկ գիւղացուն հարստահարող, նրանից կաշառներ առնող պրիստավը կը լինի արդեօք եւրոպական հայեացքներ ունեցող, թէ եւրոպական աշխարհայեացողութիւնից ազատված մի մարդ,— դա մի և նոյն է ժողովրդի համար։

—

Մեզ հաղորդում են հետևեալը։ «Երկու տարի առաջ, Հաւլաբարի մի քանի մասնաւորներ խօսում էին իրանց մէջ Հաւլաբարում կլուբ հիմնելու կարևորութեան վրա, բայց այդ մասնաւորները մնացել են մինչև այսօր առանց գործի։ Վերջապէս, կիրակի, նոյեմբերի 23-ին, երեկոյեան, հաւաքվեցան պ. Յով. Տէր-Միքայէլեանի տանը մինչև 10—12 անձինք և սկսեցին կատարել ձեռնամուխ լինել այդ գործին։ Այդ ժողովը բարեբախտաբար արդիւնաւոր անցկացաւ՝ որոշելով նոյեմբերի 26-ին աւելի մեծ գիրքով նիստ կայացնել և ընդհանուր հիմունքներ և հարցեր որոշել։ Մենք շուտով կը խօսենք կլուբի կարևորութեան և ժողովների հետևանքի մասին. միայն այժմ ցանկանում ենք կատարեալ աջողութիւն այդ գործին։ Յոյս ունենք, որ հաւլաբարցիք իրանց գործով կը ցոյց տան իրանց ընդունակութիւնը հասարակական գործերի մէջ»։

—

Նոյեմբերի 26-ին, երեկոյեան ժամի 8-ին Թիֆլիսի հասարակական դրամատան դահլիճում լինելու է հինգերորդ հնագիտական ժողովի Թիֆլիսի նախապատրաստական կոմիտէտի նիստ։ Ժողովը կը զբաղվի հետևեալ առարկաներով 1. Կոմիտէտի նախագահ Ա. Բ. Կոմարովը կը հաղորդէ տեղեկութիւններ հնագիտական աշխատութեանց մասին, որ արած են կոմիտէտի յանձնարարութեամբ։ 2. Մոսկվայի նախապատրաստական կոմիտէտի նախագահ՝ կոմս Ա. Ս. Ուվարովը կը յայտնէ հնագիտական ժողովներ հաստատելու նպատակը և նրանց նշանակութիւնը հնագիտութեան համար։ 3. Կոմիտէտի անդամ Ա. Դ. Երիցովը կը հաղորդէ հայոց եկեղեցիներին կից եղած գաւիթների և ժամատունների նշանակութեան և բնաւորութեան մասին։ 4. Ն. Օ. Ցիլոսանին ցոյց կը տայ մի քանի իրեր, որ ինքը գտած է կասպից ծովին կից տեղերում։ Նրանք, որոնք հետաքրքրվում են հնագիտութեամբ, հրաւիրվում են այդ նիստին։

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## „РУССКIЙ КУРЬЕРЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

—

Մոսկվայում հրատարակվող ,,Русскiй Курьеръ‘‘ լրագրին Փարիզից գրված թղթակցութիւնից քաղում ենք մի քանի տեղիքը։

Նկարագրելով թէ ինչպէս է ապրում Փարիզի Ֆրանսիական ուսանողութիւնը, ինչպէս ուսանողները առաւօտից մինչև երեկոյ անցնում են ժամանակ իրանց սիրուհիների հետ թէ տանը, թէ կաֆէներում, ինչպէս նրանք յաճախում են հրապարակական պարահանդէսները և պատերազմներ են անում այն բոլոր երիտասարդների դէմ, որոնք ուսանողներ չեն, թղթակիցը ասում է հետևեալը։

Փարիզի ուսանողների մեծ մասը գաւառացի ունևոր ծնողների որդիներ են, որոնք շատ անգամ 200 մինչև 300 ֆրանկ ամսական են ստանում։ Աւելի քիչ ստացողը ծածկում է իր ընկերներից, թէ որքան է իր ամսական եկամուտը և միշտ վերջին մօդայի համեմատ է հագնվում։ Ուսանողները այս կամ այն քաղաքական կուսակցութեանը չեն պատկանում իրանց համոզմամբ, այլ մեծ մասամբ պատկանում են այն կուսակցութեանը, որին պատկանում են նրանց ծնողները։ Բայց առհասարակ ոչ քաղաքական կեանքը, ոչ էլ մինչև անգամ գիտութիւնը հետաքրքրում է Ֆրանսիացի ուսանողներին, այլ նրանք մեծ մասամբ կանանցով են զբաղված և պահովի կանանց հետ են անցնում իրանց ուսանողութեան ամբողջ ժամանակը։ Բայց չը նայելով ուսանողութեան բարոյական և մտաւոր այդ տեսակ զարգացման ստոր աստիճանի, ուսանողների թիւը այնքան մեծ է, որ եթէ այդ բազմութեանից ամենաաննշան թիւն էլ կը դառնան ծանր, խորհող, ուսմանը նուիրված մարդիկ, դա բաւական է որ Ֆրանսիական գիտութիւնը իր հարկաւոր կոնտինգենտը ստանայ։

Թղթակիցը ասում է որ այժմ Փարիզում կան բաւական շատ ռուս ուսանողներ։ Նրանց թիւը հասնում է մինչև 60 հոգի և մի 15 հոգի ռուս ուսանողուհի էլ կայ։ Ասում են որ Փարիզ, մանաւանդ բժշկական ակադէմիա մտնելու նպատակով գալիս են Ռուսաստանից մեծ մասամբ րէալական գիմնազիներում աւարտածները, որոնց համար Ռուսաստանում փակած է ճանապարհը դէպի համալսարանը։ Փարիզի բժշկական բաժինը ընդունվելու համար նրանցից չէ պահանջվում լատինական և յունական լեզուները։ Թղթակիցը ասում է որ համալսարան ընդունվելու ձևերը շատ հասարակ են և մանրամասնաբար պատմում է թէ ինչպէս են ընդունվում ուսանողները։

Ռուս կանայք, որոնք ուսանում են Փարիզում, գրեթէ բացառապէս բժշկականութեամբ են պարապում։ Նրանցից միայն երկուսը՝ օրիորդներ Լէյ և Բօրոնիգեր Ֆիզիկական և մաթեմատիկական գիտութիւններ են ուսանում։ Նրանք գիտաւորութիւն ունեն Ռուսաստան վերադառնալ և ուսուցչութեամբ պարապել։ Բժշկական ուսումը աւարտած ռուս կանանցից շատերը վերադարձան Ռուսաստան, որտեղ և պարապում են պրակտիկայով։ Մինը միայն, օրիորդ Գօնչարովա, մնացել է Փարիզում, ու այդտեղ գործնական բժշկութեամբ է պարապում։ Պրօֆէսօրները շատ գոհ են ռուս ուսանողուհիներից և շատ լաւ են վարվում նրանց հետ, բայց նոյնը չէ կարելի ասել ուսանողների մասին, որոնք անվայել կերպով վերաբերվում են դէպի ուսանող կանայք, անդադար ծաղրում են նրանց, այնպէս որ կանայք աշխատում են մտնել լսարանը պրօֆէսօրի ամպիոնը բարձրանալուց յետոյ, որպէս զի հանգստութիւն ունենան ուսանողների տղայական ցուցումներից։ Շատերը ուսանող օրիորդներից ստիպված են մտնել լսարանները իրանց մի ազգականի կամ հօր հետ, որպէս զի պաշտպան ունենան ուսանողների անվայել վարմունքի դէմ։

Թղթակիցը թողնելով համալսարանը, մի քանի նորութիւններ է հաղորդում Փարիզի մամուլի և գրականութեան մասին։ Ֆէլիքս Պիայի ,,Commune‘‘ լրագիրը դադարել է և նրա տեղը սկսել է երևալ ,,Emancipation‘‘ թերթը, որ Ֆրանսիական սօցիալիստների օրգանն է։ Նրա ուղղութիւնը ծանր է, գրելու ձևը շատ ժողովրդական է և վերին աստիճանի հասկանալի, նա իր ուղղութեամբ նմանութիւն ունի գերմանական սօցիալ—դեմոկրատական օրգանների հետ։ Ուրիշ կողմից Բլանկի գիտաւորութիւն ունի հրատարակել մի նոր լրագիր հետևեալ տարօրինակ վերնագրով ,,Ni Dieu ni maitre‘‘ (ոչ Աստուած և ոչ տէր)։ Որպէս նորութիւն թղթակիցը հաղորդում է որ Էմիլ—դը—Ժիրարդէն լոյս ընծայեց մի նոր գրուածք ,,Կինը, որպէս մարդուն հաւասար‘‘ վերնագրով։ Դրանով հեղինակը պատասխանում է Ալէքսանդր Դիւմայի գրուածներին կանանց մասին։ Բաժանելով Դիւմայի կարծիքը թէ կանանց պէտք է մարդկանց հետ հաւասար քաղաքական իրաւունքներ տալ, Ժիրարդէն, այնուամենայնիւ պնդում է որ կնոջ գլխաւոր պաշտօնը հասարակութեան մէջ՝ մօր պաշտօնն է. Նրա կարծիքով կնոջը պէտք է անպայման կերպով յանձնել երեխաների կրթութիւնը, պէտք է ուրիշ կողմից վերցնել դժուարացնող ձևապաշտութիւնները պսակներ կապելու և ամուսնական ապահարզաններ կատարելու ժամանակ։

### ԱՆԳԼԻԱ

—

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։ Թէպէտ Գլադստոնի արտասանած ճառը Լօնդօնի լօրդ-մէրի մօտ չը բացատրեց անգլիական ապագայ քաղաքականութեան նախագիծը արևելեան գործերի վերաբերութեամբ, բայց դրա փոխարէն անգլիական արտաքին գործերի մինիստր լօրդ-Գրէնվիլլ նորերում ասած ճառը լոյս գցեց Գլադստոնի ճառի անհասկանալի կէտերի վրա և մեկնեց անգլիական արևելեան ապագայ քաղաքականութիւնը։

Լօրդ Գրէնվիլլ ամենից առաջ յայտնեց, որ չէ կարելի յունական հարցը անվճիռ թողնել։ Նա ոչինչ չը ծածկեց այն բոլոր անցքերից, որոնք պատահեցան Դուլցինիօի հարցը քննելու ժամանակ, որը վերջապէս աջող վախճան ունեցաւ։ Անգլիան առաջարկել էր պետութիւններին գրաւել Զմիւռնիա և լօրդ Գրէնվիլլ յայտնեց այդ առաջարկութեան չաջողվելու պատճառները։ Պետութիւններից ամենից առաջ յետ առաւ իր խոստմունքը Աւստրո-Ունգարիան և նրա օրինակին հետևեցին Գերմանիա և Ֆրանսիա, իսկ Ռուսաստանը և Իտալիան չը փոխեցին իրանց նախկին վճիռները։ Այդպիսով գործը սկսվելուն պէս անաջողութեան հանդիպեց և այսուհետև Անգլիայի արևելեան քաղաքականութիւնը բոլորովին ազատ կը լինի, միայն կառավարութիւնը կաշխատի պահպանել եւրոպական համաձայնութիւնը։ Արտաքին գործերի մինիստրը Անգլիայի և Ռուսաստանի յարաբերութիւնները ամենաբարեկամական անուանեց և խօսելով այն պետութիւնների մասին, որոնք ազնուաբար աշխատում էին պահպանել եւրոպական համաձայնութիւնը, չը յիշեց Ֆրանսիային։

Դրանից կարելի է եզրակացնել, որ Գլադստոնի մինիստրութիւնը մտադիր չէ հեռու մնալ արևելեան գործերից, ինչպէս շատերը վերջին ժամանակներում հաւատացնում էին։ Անգլիան մտադիր չէ հրաժարվել իր սկսած գործից։ Անգլիական կառավարութեան կարծիքով յունական խնդիրը անկարելի է յետաձգել և նա պարտաւոր չէ անտարբեր մնալ միայն այն պատճառով, որ եւրոպական պետութիւններից մի քանիսը չեն բաժանում այդ հայեացքները։ Անգլիան ազատ է Արևելքի մէջ այնպէս գործել, ինչպէս ինքը յարմար կը գտնի։ Նա կաշխատի պահպանել եւրոպական համաձայնութիւնը, բայց հարկաւոր դէպքում կարող է գործել և առանց այդ համաձայնութեան, մանաւանդ որ պետութիւններից մի քանիսը կատարելապէս համակրում են նրա գործունէութեան եղանակին։

Պէտք է նկատել, որ անգլիական կառավարութեան այս նախագիծը հաճելի չէ Գերմանիայի համար, որովհետև նա առաջ խորհուրդ տուեց յունական կառավարութեանը զգուշանալ պատերազմական գործողութիւններից, իսկ այժմ, չը բաւականանալով այդ խորհուրդներով, աշխատում է համոզել Ֆրանսիային և Աւստրո-Ունգարիային, որ անհրաժեշտ է հակա-յունական ցոյցեր անել։ Հազիւ թէ այդ աշխատանքները աջող վախճան ունենան, որովհետև Յունաստանը 'ի նկատի ունենալով Անգլիայի պաշտպանութիւնը, կարող է չը վախենալ հակա-յունական այդ ցոյցերից և պատերազմական գործողութիւններ սկսել Թիւրքիայի դէմ։ Քանի որ Ֆրանսիան սկամայից մասնակցում էր հակա-թիւրքական ծովային ցոյցին, որ ընդհանուր եւրոպական բնաւորութիւն ունէր, հազիւ թէ համաձայնվի մասնակցել հակա-յունական մասնաւոր ցոյցերին։ Իսկ ինչ կը վերաբերի Աւստրո-Ունգարիային, նրա շահերը թոյլ չեն տայ, որ արևելեան գործերի վերաբերութեամբ բացարձակ ընդդիմանայ Անգլիային և Ռուսաստանին։

Այս բոլորից երևում է, որ լօրդ Գրէնվիլլի ճառը չափազանց նշանաւոր է, որովհետև նա պարզ յայտնում է, որ Անգլիայի քաղաքականութիւնը չէ փոխվել և որ եւրոպական պետութիւնների համաձայնութեան խանգարվելը չի արգելի Գլադստոնին ստանալ Թիւրքիայից այն բոլոր զիջումները, որոնք պահանջվում են Թիւրքաց կառավարութեանը յանձնված պետութիւնների համաձայն գրութիւններով։

# «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

ԹԷՀՐԱՆ, 24 Նոյեմբերի։ Մի քանի հազար պարսիկ ուխտաւորներ, վերադառնալով Մէկկայից, ստիպվեցան մնալ Բաղդադի մէջ, որովհետև ճանապարհը անվտանգ չէր քիւրդերի յարձակումներից։ Քիրմանշահից դէպի արևմուտք քիւրդերը յարձակվեցան ուխտաւորների վրա։ Կարշիրինի մօտ ուխտաւորների վերջին երեք քարվաններ մեծ վնաս կրեցին. աւելի քան 500 հոգի ուխտաւորներից սպանվեցան և վիրաւորվեցան։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, 24 Նոյեմբերի։ Միացած նաւատորմը երէկ հեռացաւ։ Աւստրիական նաւերը ուղեկցում էին նաւատորմին մի քանի մղոն տարածութեան վրա։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ